ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Մանկավարժի վարքականոն (էթիկայի նորմեր) փաստաթղթի վերաբերյալ

Վերջին տարիներին բազմաթիվ հետազոտություններ և ԶԼՄ հրապարակումներ բազմիցս ահազանգել են հանրակրթական ուսումնական հաստատություններում տարբեր մանկավարժական և վարչական աշխատակիցների կողմից դրսևորվող ոչ օրինաչափ և ոչ մասնագիտական վարքագծի երևույթների մասին: Բազմաթիվ հետազոտություններում բերվում են փաստեր կրկնուսուցման, երեխաների հանդեպ վատ վերաբերմունքի, բռնության և խտրականության դեպքերի, տնօրեն-ուսուցիչ, տնօրեն-ծնող, ուսուցիչ-ծնող, աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում անառողջ երևույթների և կոնֆլիկտների վերաբերյալ: Արձնագրված դեպքերը հիմնականում հանդիսացել են անհրաժեշտ նորմատիվ-իրավական կարգավորումների բացակայության կամ անկատարության հետևանք:

Այս առումով, Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան կազմակերպությունները ողջունելի է համարում ՀՀ ԿԳՆ ցանկացած նախաձեռնություն, որն իրավական դաշտում միտված է կարգավորել և կանխել նմանօրինակ ոչ օրինաչափ և ոչ մասնագիտական երևույթների գոյությունը:

Սակայն, հատկապես հաշվի առնելով Հայաստանում վերջին ամիսների զարգացումները, գտնում ենք որ նախքան որևէ ուսուցիչների էթիկայի կանոնների մշակումը անհրաժեշտ է նախաձեռնել և իրականացնել լրջագույն համակարգային փոփոխություններ, որոնք կբացառեն նախորդ ռեժիմից ժառանգություն ստացված արատավոր երևույթների գոյությունը և կվերականգնեն բարեվարքությունը՝ կրթական համակարգում: Այս համատեքստում կարծում ենք, որ հրատապ անհրաժեշտություն է ***օրենսդրական դաշտում կարգավորել կրթական համակարգի սուբյեկտների միջև իրավահարաբերությունները, ինչպես նաև օրենսդրորեն բացառել համակարգի բոլոր դերակատարների միջև շահերի բախման հնարավոր դրսևորումները***:

Ի հավելումն վերոգրյալը, կարծում ենք նաև, որ էթիկայի նորմերի մշակման նախաձեռնությունը պետք է հետևի մի շարք սկզբունքների: Մասնավորապես

1. Էթիկայի նորմեր սահմանելու դեպքում կարևոր է, որ այն վերաբերի ոչ միայն մեկ խումբ մարդկանց՝ ուսուցիչներին, այլ ներառի նաև մյուս դերակատարներին՝ տնօրեն, այլ վարչական աշխատողներ, և այլն: Ցանկալի է, որ էթիկայի նորմերը կարգավորեն համակարգի տարբեր դերակատարների վարքի կանոնները՝ տարբեր փոխհարաբերությունների ընթացքում: Օրինակ. ուսուցիչ - ծնող, տնօրեն – ուսուցիչ, ուսուցիչ – սովորող, տնօրեն – լիազոր մարմնի ներկայացուցիչ, և այլ փոխհարաբերություններում յուրաքանչյուրի էթիկայի նորմերը:
2. Նախքան նման նորմերի մշակումը ցանկալի է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանում տարբեր, այդ թվում՝ կրթության ոլորտում, մշակված և ընդունված էթիկայի նորմերը, դրանց կիրառման արդյունավետությունը: Միջազգային փորձի

ուսումնասիրությունը նույնպես օգտակար կարող է լինել: Նման վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալ, արդյո՞ք ժամանակավրեպ չէ նոր նորմերի մշակումը, որքանո՞վ արդյունավետ են էթիկայի նորմերն ընդհանրապես մեր և այլ հասարակություններում, և այլն: Այս կապակցությամբ, ցանկանում ենք հիշեցնել, որ 2014-2017թթ. ընթացքում Եվրոպային Խորհրդի ֆինանսավորմամբ իրականացված «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարը» ծրագրի շրջանակում մշակվել և ընդունվել են բարձրագույն կրթության ոլորտի ծավալուն էթիկային նորմերը: Սակայն վերջիններս, գործադիրի կողմից չընդունվելով որպես նորմատիվ փաստաթուղթ, մեծամեսմնացին թղթի վրա և դանց կիրառումը գործնականում տեղի չունեցավ:

Առանձին անդրադառնալով նաև հանրային քննարկման ներկայացված «Մանկավարժի վարքականոններ (էթիկայի նորմեր)» փաստաթղթի (այսուհետ՝ Նախագիծ) բովանդակությանը հարկ ենք համարում նշել, որ Նախագիծը չի հասցեագրում համակարգում տարբեր սուբյեկտների վարքագծում առկա էթիկայի և վարքականոնների խախտման հետազոտված խնդիրները: Ավելին, նախագծում տեղ գտած վարքագծի տարբեր դրսևորումներ հանդիսանում են օրենսդրությա՛ն, և ո՛չ թե էթիկայի կամ վարքականոնների խախտում: Նման երևույթների բացահայտման դեպքում խախտումը թույլ տված անձի նկատմամբ պետք է կիրառվեն օրենսդրությամբ սահմանված պատժամիջոցներ և նման վարքագծի դրսևորումները անթույլատրելիությունը չպետք է նվազեցվի և դիտարկվի էթիկայի տիրույթում:

Այսպես, օրինակ, Նախագծի 1.3. կետում, որպես էթիկայի նորմերի սկզբունքներ, սահմանված է «հարգանք երեխայի իրավունքների ու ազատությունների հանդեպ»: Հարկ են համարում հիշեցնել, որ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27 հոդվածի կետ 2-ի 1-ին ենթակետը որպես մանկավարժական աշխատողի թիվ մեկ պարտականություն արդեն իսկ սահմանում է, որ մանկավարժական աշխատողը պարտավոր է հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը: Տվյալ կետի կրկնակի սահմանումը որպես էթիկայի նորմ նվազեցնում է տվյալ պահանջի կարևորությունը և հնարավորություն է տալիս նման խախտման բացահայտման դեպքում այն որակել որպես էթիկայի նորմի խախտում՝ փոխարենը օրինազանց անձի նկատմամբ օրենքով սահմանված պատասխանատվության միջոց կիրառելը:

Նախագծի մի շարք կետերում[1] նշված են հատվածային դրույթներ ուսուցչի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, ինչը էթիկայի նորմերի կարգավորման տիրույթից դուրս է և արդեն իսկ սահմանված է Օրենքում և այլ իրավական ակտերում:

«Օրինապահությունը», որ նույնպես սահմանված է որպես էթիկայի նորմերի սկզբունք, կրկին հակասության մեջ է «էթիկայի նորմեր» երևույթի հետ: Մանկավարժական աշխատողի կողմից որև օրենքի դրույթի խախտումը չի կարող և չպետք է դիտարկվի «էթիկայի նորմերի» խախտման տիրույթում: Այն պետք է սահմանված լինի, որպես աշխատանքային պայմանագրի կետ, իսկ օրինապահության խախտումը պետք է քննվի սահմանված ընթացակարգով համապատասխան մարմինների կողմից և, ապացուցված լինելու պարագայում, առաջացնի օրենքով սահմանված հետևանքներ:

«Արհեստավարժությունը» նույնպես սահմանված է որպես էթիկայի նորմերի սկզբունք: Առնվազն հարց է առաջանում, ինչպե՞ս է հնարավոր, որ մրցութային ընթացակարգող

[1] 3.12., 3.13., 3.15., 3.16., 3.18., 3.19., 4.1., 4.3., 4.5.

աշխատանքի ընդունված ուսուցիչը լինի ոչ արհեստավարժ, այսինքն՝ չհամապատասխանի իր պաշտոնի նկարագրին համապատասխան մասնագիտական որակներին:

«Ինքնատիրապետումը» նույնպես սահմանված է, որպես էթիկայի նորմերի սկզբունք: Այստեղ հստակ չէ, թե ինչ է ինկատի ունեն Նախագծի հեղինակները ասելով «ինքնատիրապետում». արդյո՞ք խոսքը գնում է մեկ անգամյա երևույթի, զայրույթով պայմանավորված պոռթկման մասին, թե խոսքը գնում է հիվանդությամբ պայմանավորված ինքնատիրապետման սիստեմատիկ բացակայության մասին: Բոլոր դեպքերում, ուսուցիչի կողմից նման վարքագիծը անմիջականորեն վտանգում է երեխաների առողջությունն ու անվտանգությունը և նման վարքագծի պարագայում այն նույնպես չի կարող և չպետք է դիտարկվի էթիկայի նորմերի տիրույթում: Բացի դրանից, Օրենքի 24 հոդվածի կետ 1-ի 3-րդ ենթակետը սահմանում է, որ մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Հետևաբար, ինքնատիրապետման կորստի հանգեցնող հիվանդություն ունեցող անձին իսկզբանե չպետք է թույլատրվի ուսուցչի աշխատանքով զբաղվել:

Սկզբունքներում, ինչպես նաև Նախագծի հաջորդիվ բաժիններում սահմանված են մի շարք կետեր և դրույթներ, որոնց մեկնաբանությունը կարող է լինել սուբյեկտիվ, և հստակ չափանիշների բացակայության պարագայում տվյալ սկզբունքների կամ դրույթների խախտումը հնարավոր չի լինի ապացուցել: Այսպես, օրինակ, 1.3. կետում հոգատարությունը, պատասխանատվությունը, արդարամտությունը, բարյացկամությունը, սկզբունքայնությունը, ազատախոհությունը և ուղղամտությունը սահմանված են որպես էթիկայի նորմերի սկզբունքներ, մինչդեռ թվարկված սկզբունքները կարող են տարաբնույթ մեկնաբանություն և վերծանում ունենալ՝ ելնելով անձի կրթվածության մակարդակից, աշխարհայացից և այլ հատկանիշներից: Նախագծի կետ 2.1.-ում ասվում է, որ ուսուցիչը պետք է նվիրված լինի իր աշխատանքին, սակայն «նվիրված լինելու» չափանիշները սահմանված չեն, ինչը կրկին կարող է հանգեցնել իրարամերժ ընկալումների:

Ի թիվս բազմաթիվ դրույթների, որոնք սահմանված են այս Նախագծում և մեր կարծիքով խնդրահարույց և ոչ միանշանակ են, առանձին ցանկանում ենք անդրադառնալ Նախագծի կետ 3.7. և 3.8. կետերում ամրագրված սովորողի գնահատմանն առնչվող կետերին: Սովորողների առաջադիմության ներկայիս համակարգը մեր կարծիքով ինքնին կատարյալ չէ, ինչը հնարավորություն է տալիս բազմաթիվ կամայականությունների և շահարկումների՝ ուսուցիչների և դպրոցի վարչական կազմի կողմից: Գտնում ենք, որ տվյալ խնդրի լուծումը կրկին չպետք է դիտարկվի և փորձ արվի կարգավորել էթիկայի նորմերի տիրույթում: Անհրաժեշտ է մշակել և ընդունել այնպիսի գնահատման համակարգ, որն ինքնին կբացառի որևէ դերակատարի կամայականությունները, իրապես կարտահայտի սովորողի առաջադիմության պատկերը՝ չխախտելով և չնսեմացնելով սովորողի իրավունքներն ու արժանապատվությունը:

Ամփոփելով, ցանկանում են ևս մեկ անգամ նշել, որ Նախածգի բովանդակությունը չի համապատասխանում հայտարարված վերնագրին, դրա ընդունումը ժամանակավրեպ է և անարդյունավետ: Այն կարիք ունի էական վերանայման և վերախմբագրման: Նման փաստաթղթի ընդունումը կարող է քննարկվել միայն կրթության զարգացման ռազմավարության ընդունումից հետո՝ քննարկելով և համաձայնեցնելով մասնագիտական և ծնողական հանրույթի հետ: